




ԻՆՔՆԱՍԻՐՈՒԹՈՒԽՆ

(Պոտապէնկօ):



ալտուիինին բաղդը չեր ժպտում երբ
նա մտաւ համայսարան, մաքուր,
լաւ հագնուած ջահել ուսանող
էր, գրպանումն էլ փողը միշտ
անպակաս: Նա բարի էր, մարդու
դրութեան մէջ մտնող և երբէք
չեր հրաժարում ընկերներին օգ-
նելուց Բայց այսպիսի մի անյա-
ջողութիւն պատահեց՝ համալսա-
րան մտնելուց վեց ամիս յետոյ, նորա հայրը, որ գաւա-
ռական քաղաքում ձեռնտու պաշտօն ունէր քաղաքային
ինքնավարութեան մէջ, մի դէպքից յետոյ ձախորդութեան
հանդիպեց: Ոչ ո՞ր չգիտէր թէ ինչ դէպք էր այդ, միայն
բոլորը գուշակում էին, որ մի մութը պատմութիւն է: Նո-
րա հայրը զրկուեց պաշտօնից, մինչև անգամ իւրաունեցած
փոքր կարսղութիւնից և ընկաւ դատի տակ: Այդ ժամանա-
կուանից Կալտուիինն աղքատացաւ և սկսեց անյաջողու-
թեան մէջ ընկնել:

Թէև կարելի է այդ նրանից էլ էր, որ նա երես ա-
ռած, լաւ ապրած էր, որովհետև նորա մանկութիւնը ամե-
նալաւ պայմաններումն էր անցել: Նա չեր կարող դժուա-
րութիւններից դուրս գալ, ինչպէս որ հեշտութեամբ դուրս
էին գալիս ուրիշները: Եւ բացի այդ, կարծես բաղդն ուղ-

զակի երեսը դարձրեց նորանից. պատահում է, մարդ այնպիսի աստղի տակ է ծնուռմ, որ կարծես ամեն բան զինուորւում է նորա դէմ։ Նա պարապում էր ուրիշներից ոչ պակաս. խելօք էր և ընդունակ ու բան հասկացող. բայց բաւական էր, որ մի դաս գտնէր և երկու երեք շարաթ չանցած երեխայի ծնողները կըսկսէին տրտնջալ, թէ Կալտուխինը լաւ չէ պարապում։ Նորա չար աստղը կարծես անցնում էր և իւր աշակերաների վերայ՝ նոքա երկուսներ և մաւորներ էին ստանում։

Եւ մեծ դժուարութեամբ Կալտուխինը մաքառում էր իւր ճակատագրի հետ։ Նա երրորդ շրջանումն էր (կուրսում) բայց ո՞րչափ փոխուած էր, համեմատելով այն ժամանակուայ հետ, երբ առաջին անդամ համաշարան մտաւ։

Այն ժամանակ նա մի շենք ու շնորհքով երիտասարդ էր, լաւ կազմուածքով, նուրբ ու դուրեկան ձևերով, զուարթ երեսով, իսկ այժմ, կարծես ամբողջովին հնացել, մաշուել էր, ամեն բան նորա վերայ տրորուած էր, ամեն ինչ կորցրել էր իւր ձեռն ու գեղեցկութիւնը։ Նորա դէմքի վերայ երկում էր զայրոյթ։ Երեսը ծածկուել էր մազով ու կոպտացել, իսկ կաշու գոյնն անդուր-մոխրագոյն էր դառել։ Այն մրցումը, որ նա տանում էր, բոլորն արտացոլում էր երեսի վերայ։

'Ի. Հարկէ, ընկերների մէջ քաղցածութիւնից մեռնել կարելի չէ. — մէկից նա առնում էր 1 ռուբլի, միւսից 2. շատ անդամ գիշերում էր ընկերների մօտ. շատերին այդ դիւր չէր գալիս, բայց ամենքը սովորել էին այդ բանին և համբերում էին։

Ամեն մարդու էլ պատահում է դժուարութեան մէջ ընկնել և օգտուել ընկերի ծառայութիւնից, բայց Կալտուխինի հետ այդ անդամար ու շարունակ էր լինում. նա միշտ ու հանապազ վատ դրութեան մէջ էր և միշտ էլ օգնութեան կարօտ։ Մարդ և զումը էր նորան և ի հարկէ, այդ ձախորդութիւնների համար նա ինքը մեղաւոր չէր, ընկերներն այդ լաւ էին հասկանում, բայց բոլորն էլ չէին կարող քաղաքավարի և գոյոյշ լինել և շատերի վարմունքի մէջ երևում էր, արհամարհանք դէպի Կալտուխինը։ Օրինակ՝ մէկը մեսնելով նորա տիպուր ու յուսահատ երեսը ուղղակի կասէր՝

— Ճը՛, ի՞նչքան է քեզ հարկաւոր, կալտուխին. ակ-
նարկելով, որ միշտ նորա սովորութիւնն է փող խնդրել:

Կալտուխինն այդպիսի գեպքերում նայում էր ընկե-
րին մոայլ հայեացըով և լուռ ու մունջ հեռանում: Բայց
այնուամենայնիւ ստիպուած էր փող ուզել, առանց որի կա-
ռավարուել չէր կարող: Նա մեծ ինքնասիրութիւն և կամ-
քի ոյժ ուներ, նա հասկանում էր, որ ինչ էլ լինի, պէտք
էր շուտով աւարտել, վկայական ստանալ և որ միայն այդ
կարող էր իրան փրկել ստոր աղքատութիւնից: Եւ այդպէս
վճռելով, նա արդէն գիտութեամբ տանում էր ամեն վիրա-
ւորանք: Նորա մասին այսպիսի կարծիք էր կազմուել՝ թէ
նա անընդունակ, անվարուող և անբաղաբավարի մարդ է:
Բայց այդ ճշմարիս չէր. նորան միայն բազրը չէր ժըպ-
տում, ուրիշ ոչինչ:

Կալտուխինը ոչ միայն ընկերների շրջանում վատ ա-
նուն ուներ, այլ և պրօֆէսօրների և համալսարանի վար-
չութեան: Ամիս չէր անցնի, որ Կալտուխինը տեսչին խնդիրը
չներկայացներ, որի մէջ ընդհանրացած ձևով գրում էր՝
«Դանուելով ամենադժուար հանգամանքներում, խոնարհա-
բար խնդրում եմ տալ ինձ միանուագ օգնութիւն և պյան:»
Ազգբում տալիս էին նորան փոքր գումար, 10, 15 ռուբլի,
բայց յետոյ, երբ նորա խնդիրըները անդադար շուտ-շուտ
կրկնում էին, սկսեցին մերժել: Իսկ թոշակները բիշ էին,
և նա ստանալ չէր կարող, որովհետեւ վատ թուանշաններ
ռւներ:

Կալտուխինն արտաքուստ խաղաղ բնաւորութեան տէր
էր երեսում. ընկերների հետ չէր կուռում, բայց և չէր մը-
տերմանում, նա երբեմ փորձում էր մօտենալ մէկին կամ
միւսին, բայց դէպի ինքն արհամարհանք նկատելուն պէս,
խսդյն հեռանում էր և էլ փորձ չէր անում մօտենալու:
Միայն Սմուրով ուսանողի հետ բիշ շատ մօտիկ էր և այդ
էլ այն պատճառով միայն, որ նորա համաքաղաքացի էին և
միասին սովորել միենոյն գիտազինում:

Սմուրովը գիտէր նորա գրութիւնը, խղճում էր կալ-
տուխինին սրտանց, բայց օգնել չէր կարող, որովհետեւ ինքն
էլ հազիւ հաղ կարողանում էր ծայրը ծայրին հասցնել:
Միայն թէ Սմուրովն էլ չգիտէր, թէ ի՞նչ է կատարւում

Կալտուխինի հոգու մէջ, իսկ այդ ժամանակ նորա հոգու մէջ վիրաւորուած ինքնասիրութիւնից առաջ եկած մի սարս սափելի՛ վէրը էր գոյանում... այդ վէրքն օրէցօր մեծանում էր և վերջապէս այն աստիճանի հասաւ, որ նա էլ չէր կարող դիմադրել նորան:

Եւ ահա նկատեցին, որ քանի օր շարունակ կալտուխինը ճաշարան չէր գալիս, որտեղ երբեմն նորա համար վը-ճարում էին ընկերները և ոչ ոքից էլ փող չէր խնդրում:

Այդ շատ զարմանալի էր. համալսարան նա գալիս էր, դասախոսութիւնները լսում էր և առհասարակ ոչնչով չէր փոխել իւր վարմունքը:

—Դու երևի պարապմունք ե՞ս գտել, կալտուխին, հարցնում էին նորան:

—Այս, գտել եմ—պատասխանում էր նա և էլ չէր ուզում ոչ մի բացատրութիւն տալ:

—Դաս է:

—Այս, դաս է:

—Ճեռնառն է:

—Ինչու չե... ապրել կարելի՛ է...

Պարզ էր, որ նա չէր ուզում անկեղծ խօսել. բայց վերջապէս այդ փոփոխութիւնը նկատեց և Սմուրովը:

—Ցիրաւի, կալտուխին, դաս ունե՞ս—հարցրեց մէկ անգամ Սմուրովը:

—Մի՞թէ դա այնքան անհնարին բան է, ասաց կալտուխինը ոչ բարեկամական ձևով:

—Ոչ, ինչո՞ւ, ես շատ ուրախ եմ, որ դու վերջապէս դործ ես գտել... բայց... կարծեմ... քեզ երկար ժամանակ չէր յաջողւում...

—Իսկ այժմ՝ յաջողուեց, ի՞նչ կայ որ:

—Ո՞րտեղ, ո՞ւմ մօտ:

—Մի՞թէ միւնոյն չե...

—Տարօրինակ է, գաղտնի՞ք է ինչ է, ներիր ինձ...

—Գաղտնիք չե, բայց ի՞նչ հետաքրքրուելու բան է. բոլոր դասերը միատեսակ են... ուրեմն մի ընտանիքում... աստիճանաւորի մօտ...

—Ճաշով է՞:

—Այս և ճաշով...

— Դէ՛, փառք Աստուծոյ... ես շատ ու շատ ուրախ եմ,
Կալտուխին:

— Ընորհակալ եմ...

Սմուրովը պատմեց ընկերներին, որ յիրաւի Կալտու-
խինը դաս է գտել բնակարանով ու ճաշով և բոլորն ու-
րախացան. շուտով նկատելի եղաւ, որ ընկերների մէջից
վերացաւ առաջուայ յարաբերութիւնը դէպի Կալտուխինը է
Այդ կարծես ինքն երան է լինում. մարդկային բնաւորու-
թեան վատ յատկութիւններից մէկն է՝ անդիսակցաբար
յարդանքով վերաբերուել դէպի յաջողութիւնը, իսկ մօտիկին
անյաջողութիւնների վերայ խղճալը շուտով փոխում է
արհամարհանքի դէպի նաև թէւ Կալտուխինին օգնում էր և
այն, որ նա էլ ոչ որի չէր անհանգստացնում իւր խըն-
դիրքներով. մէկ խօսքով, կարծես Կալտուխինը ոտքն արդէն
ամուր հողի վերայ էր դրել և ամենքն էլ սկսեցին մոռա-
նալ, թէ ինչպէս նա շարունակ ձանձրացնում էր բոլորին:

Անցաւ մէկ ամսի չափի Մէկ անգամ Սմուրովն հանդի-
պելով նորան համալսարանում, ասաց՝

— Լսի՞ր, Կալտուխին, կարծեմ դու իմ գերմաններէն
քառարանը վերցրել ես. քեզ մօտ է:

— Այս, ինձ մօտ է...

— Այսօր ինձ շատ հարկաւոր է:

— Լաւ, կըբերեմ:

— Ինչու դու անհանգիստ լինիս, ես ինքս կը գտմ
քեզ մօտ. միայն դու հասցէդ տուր:

— Հասցէս... չէ, ինչու համար... ինձ դժուար չէ
քերելը... ես կը բերեմ...

— Բայց առհասարակ, շարունակեց Սմուրովը, ուզում
եմ երբեմ քեզ մօտ գտլ, միթէ՛ բո հասցէն գաղտնիք է:

— Դու էլ բան ես ասում. ինչո՞ւ պիտի գաղտնիք լի-
նի. հասցէն ի՞նչպէս կարող է գաղանիք լինել. բայց այն-
պէս... ուղակի անյարմար է..., գիտես, նոքս, իմ աանտէ-
րես խիստ մարդիկ են... իսկ իմ սենեակը մանելու հա-
մար պէտք է անցնել..., անցնել սեղանատան միջով... դէ՛,
նրանք այդ չեն սիրում... գիտես, տարօրինակ մարդիկ են
... վայրենի...

Սմուրովին թւում էր, որ Կալտուխինի ասելու ձեի

մէջ մի սուտ բան կայ. բայց ՚ի հարկէ, նա չէր գուշակում, թէ ինչ կարող էր լինել և չէր ել պնդում, որ իմանայէ Կալտուխինը ճշտութեամբ կատարեց իւր խոստմունքը և բառարանը բերեց ճիշդ ժամը 4-ին, ինչպէս ընկերը նշանակել էր:

Անցաւ էլի երկու շաբաթ: Կալտուխինն առաջուայ պէս դաշիս էր դաստիօսութիւններ լսելու, բայց նորա երեսի վերայ նշմարւում էր յոգնածութիւն. նա նիշարել էր, պյտերը փոս էին ընկել և աչքերի մէջ մի տեսակ փայլ էր երեւում:

—Հիւանդ ես ինչ է, հարցնում էին նրան ընկելները. դու վատ տեսօք ունես:

—Խչո՞ւ է վատ —պատասխանում էր Կալտուխինը յանքերը վրայ բերելով —սովորական տեսքս է... երեկ քունչ չեմ տոել... շատ նստեցի, խօսեցի երկար, ուրիշ բան չկայ:

Բայց Սմուրովն հետաքրքրուեց. առ հասարակ Կալտուխինի վարմունքը նրան տալորինակ երեւում. Կալտուխինը կարծես խոյս էր տալիս նրա հետ մենակ մալուց, կարծես վախենում էր հարց ու փորձից. իսկ երբ հարցնում էր իրան ունեցած դասի մասին, Կալտուխինը կարճ էր կարում և նայում էր մի ուրիշ կողմ, բայց արդէն Սմուրովին շատ էր անհանգստացնում նորա հիւանդու երեսը:

—Լսիր, Կալտուխին —տասց նա. —այդ վատ է, որ դու հիւանդ ես և ոչ մի միջոց չես գործ դնում... Ի՞նչ աեղդ է ցաւում. գուցէ լուրջ բան է. աւելի լաւ չէ, որ ժամանակին հոգաս այդ մասին. կարելի է տեղաւորուել հիւանդանցում, բեզ ձրի կընդունեն...

—Դատարկ բաներ են. ես հիւանդ չեմ, բոլորովին առողջ եմ... Վիրաւորուած պատասխանեց Կալտուխինը և հեռացաւ:

Բայց նորա երեսը բանի գնում վատանում էր. նորա վերայ երեւում էին ինչ որ բծեր, իսկ աչքերի մէջ չափազանց յոգնածութիւն Սմուրովը մինչև անդամն կատեց, որ Կալտուխինն երբեմ աչքերը փակում էր դաստիօսութեան ժամանակ և կարծես քնում էր մի րոպէ:

—Չէ, ասաց նա ինքն իրան. պյտեղ մի բան կայ. Կալտուխինը ծածկում է... պէտք է դորանով զբաղուել:

Եւ այդպէս, մէկ ձմրան երեկոյ, Սմուրովը վճռեց ընկերին աչքից բաց չթողնել Վերջին դասախոսութիւնն ուշ վերջացաւ. Սմուրովը նատել էր Կալտուխինի կողքին և նրան երեք անգամ զարթեցրեց ինքնամոռացութիւնից. Կալտուխինը ցնցուեց, գլուխը վեր բաշեց և ասաց՝

— Մտածմունքի մէջ էի ընկել...

Բայց Սմուրովն էլ չէր հաւատում նորա խօսքերին: Նա հիւանդ է, գիշերները չի քնում. նորա կեանքի մէջ մի ինչ որ ողբերգութիւն է կատարում. — Ճրացարում էր Սմուրովն ինքն իրան:

Դասախոսութիւնը վերջանալուն պէս, Կալտուխինը մի աեսակ ջղային կերպով վեր ելաւ տեղից, ձեռքն երկարացրեց դէպի ընկերը և ասաց.

— Մնաս բարեաւ!

Եւ շտապով դուրս գնաց:

Սմուրովը նորան ձեռք տուեց, բայց իսկոյն դուր, եկաւ նորա յետեկից. Նա 50 քայլաշափ յետ էր մնում և աշխատում էր փողոցով առանց աղմուկ հանելու գնալ, որպէս զի Կալտուխինի ուշադրութիւնը չգրաւէ:

Մութն ընկաւ բոլորովին. փողոցի լապտերները վառուեցին: Կալտուխինը շտապ շտապ, բայց կարծես գլորուելով էր գնում. երբեմն նա յանկարծ կանդ էր առնում, գըլունել բռնում էր և յետոյ աւելի արագ շարունակում ճանապարհը: Այդ բոյորը Սմուրովին անհանգստացնում էր և սկսեց մտածել, թէ չլինի Կալտուխինը խելագարուի:

Բայց ինչից կարող է այդպէս լինել. եթէ այդ առաջ պատահէր, երբ Կալտուխինի դրութիւնն իսկապէս սարսափելի՞ էր, նա դեռ այնքան չէր զարմանայ. բայց ինչո՞ւ պէտք է այժմ այդպէս լինի, քանի որ Կալտուխինն արդէն աեղաւորուել և գործերն աւելի յաջող էին գնում: Գուցէ լուր է ստացել տանից և իմացել է, որ այնտեղ մի նոր դժբաղութութիւն է պատահել. Է՛հ, մարդուս բաղաը որ թեքուի, ամեն բանի մէջ մինչև վերջը կ'երթայ... մտածում էր Սմուրովը հետևելով Կալտուխինին:

Բայց ուր է գնում արդեօք. արդէն կէս ժամ է անցել, ինչ համալսարանից դուրս ենք եկել, բայց խեղճ ուղան դեռ գնում ու գնում է: Ահա՝ արդէն Սուխարեօվիկէն,

Կրամնիա վօրօտա ասուած տեղը. այնուհետև շարունակ երևում էին նեղ նեղ փողոցներ, կեղտոտ տնակներ, երկար, փայտեայ ցանկապատներ. Ուր է գոռում նա, մարդ չի հասկանում, այս կողմերն ով էլ որ լինի չի ապրի, թէկուզ և ամենաաղբատ աստիճանաւոր:

Բայց ահա մի բոլորովին դատարկ փողոց, որտեղ լապ-տերները շատ քիչ և խաւար էին. չեր երևում ոչ մի մարդ. Սմուրովը վախեցաւ թէ մի գուցէ դատարկ փողոցի շնորհիւ Կալ-տուխինն իւր ոտքերի ձայնին ուշադրութիւն դարձնէ և ա-ւելի յետ մաց նորանից այնքան միայն որ նորա հետքը չը-կորցնէ:

Բայց ահա երևացին մի տեսակ կիսաքանդ շինութիւն-ներ, որոնց մէջ կարծես մարդ չեր ապրում և դոցա-նից մէկի մօս Կալտուխինը կանգնեց և դէպի աջ ծռուելով յանկարծ անհետացաւ: Սմուրովը յուզուած, բարախող սրտով իւր բայլերն արագացրեց. նա հասաւ մինչև այնտե-ղը, ուր ծածկուեց իւր աչքից Կալտուխինն և տեսաւ դէպի բակը ասանող մի լան մուտք:

Այնտեղ մութն էր, չեր նկատում ոչ մի շարժում. նա կամաց բայլերով մտաւ բակը, հասաւ մինչև մէջանեղը և աշբերը լարելով տեսաւ ինչ որ առարկայ և քիչ մաց որ դիպչէր ջրկիր տակառին. նա տակառին ձեռք տուեց և աե-սար որ թաց է:

«Երկի, — մտածեց նա, մէկն այսօր ջուր է կրել սորա-նով. ուրեմն այստեղ ապրում են մարդիկ»:

«Նա սկսեց նորից լաւ զննել. նորա աչքերը սովորե-ցին մժութեանը և նկատեց դարձեալ մի քանի բաներ, որ առաջին անդամից չեր տեսել:

Բակի մէջ կար մի փոքրիկ տնակ, չին ու ծռուած դէ-պի մի կողմ. այդ տնակն ունէր մէկ գուռ և երկու պստիկ լուսամուտ, գիւղական ևրմիթների նման լուսամուտները ծածկուած էին փեղկերով և նոցանից մէկի ձեղքից յան-կարծ լուսոյ մի բարակ շերտ երևաց:

—Այս, այստեղ ապրում են, ասաց ինքն իրան Սմու-րովը:

Բայց այդ միջոցին նա յանկարծ վախ զգաց — կարելի է դա մի աւազակային ապաստանարան է. նա Մոսկուային

լաւ ծանօթ չեր, այդ կողմերն առաջին անգամն էր լինում: Բայց այստեղ մտաւ Կալտուխինը. Զարհուրելի՛ է կարեւ, որ Կալտուխինի և աւազակային ապաստանարանի մէջ մի ընդհանուր բան լինի:

Մի՛թէ առհասարակ զարհուրելի՛ չէ այս ամենը.— Ընկերի տարօրինակ վարմունքը, որ եկել հասել է այստեղ, այս խուլ փողոցը. մինչդեռ առաջ ասում էր ինչ որ դասի և աստիճանաւորի մասին... Սմուրովը չգիտէր ինչ վճռէ. գուցէ Կալտուխինը այստեղ չմտաւ. գուցէ իրան միայն թուաց. հեռու տարածութիւնը կարող էր իրան խարեւլ: Եթէ ենթադրենք, որ Կալտուխինը զանազան պատճառներից դրդուած չէր ուզում որ իմանան իւր բնակութեան տեղը, ուրեմն ինչ կլինի եթէ ես յանկարծ մտնեմ նորա տնակը, մտածում էր Սմուրովը. կարելի է այդ վարմունքը վիրաւորէ Կալտուխինին, եթէ նորան յանկարծ գտնեմ որևէ ստոր պայմանում և գուցէ կոպիտ կերպով բանամ նորա գաղանիքը:

«Ոչ, — մտածեց Սմուրովը, — այդպէս չէ կարելի. վերջ ի վերջոյ գուցէ անհրաժեշտ կը լինի փնտրել և ազատել նորան որ և է սարսափելի՝ ողբերգութիւնից. բայց այդ պիտի զգոյշ անելու:

«Նա որոշեց դուռը չենծել ու չմտնել այտեղ գըտնուող անակը:

Նա դուրս եկաւ բակից, որը դուռ չունէր և ուշադրութեամբ զննեց անակն ու բոլոր նշանները, որ ցերեկով չսխալուի. վերադառնալիս նա աշխատում էր միտքը պահել աների գյուներն ու ձևերը. անկիւններում ոչ մի տեղ փողոցի անուն չկար, ուրեմն այդ մասն արդէն քաղաքի շարունակութիւն չէր համարւում: Եւ այդպէս, ամեն ինչ հետաքրքրութեամբ նկատելով, վերջապէս նա ընկաւ մի լուսաւոր փողոց:

Միւս օրը նա աւելի վաղ գնաց համալսարան, բայց Կալտուխինը դեռ չկար և մինչև ժամը 12-ը չերեւաց: Սմուրովն սկսեց անհանգուտանալ թէ ինչու երէկ յետ եկաւ ինքը, կարելի է հենց երէկ էր հարկաւոր Կալտուխինին օգնել:

Ժամը $12\frac{1}{2}$ -ին Կալտուխինն եկաւ. նա շատ վտանբեր

ունէր. աչքերն պրտասովոր կերպով փայլում էին և գունատ քունքերի վերայ աչքի էր ընկնում կապշտ նեարդների զարկը. և ընդհանրապէս նա տենդային դրութեան մէջ էր երևում:

Սմուրովը բարեւեց նորան և հարցրեց:

— Դու գարձեա՞լ վատ ես բնել:

— Այո, չոր կերպով պատասխանեց Կալտուխինը:

— Անքնութիւն ունի՞ս:

— Այո, անքնութիւն, ասաց նա և սկսեց ցած նայել, անշուշտ որ նոցա հայեացքներն իրար չհանդիպէին:

Սմուրովը հեռացաւ նորա մօտից, իսկ յետոյ, պրօֆէսորի ներս գալուց առաջ դուրս եկաւ լսարանից. նա մի ծրագիր ունէր ՚ի նկատի:

Դուրս եկաւ փողոց, քննեց իւր քսակը և տեսաւ որ 2 ուուրլու չափ փող կայ մօտը. կառը վարձեց մինչև Կրասնիա վօրօսա. մինչև ուզած տեղը վարձել չէր կարող, որովհետեւ փողոցների անունները չգիտէր. իսկ Կրասնիա վօրօսոյից այն կողմը յայս ունէր գանել երեկուայ նշաններով:

Այդպէս էլ արեց. բայց երկար թափառելուց յետոյ միայն ընկաւ այնտեղ, ուր հարկաւոր էր: Ահա և ծոսուած անակը, ահա ընդարձակ բակն առանց դռների, բայց տակառը չկար, հին շորեր հագած մի կին աշշում լուացը էր անում. Սմուրովը մօտեցաւ նորան և բարեւեց. կինը զարմացած նայեց նորա վերայ:

— Բարի յաջողում, ասաց Սմուրովը:

— Շնորհակալ եմ, պատասխանեց կինը:

— Այս տան մէջ կարծեմ ապրում է ջրկիրը, այնպէսչե՞ւ

— Հա՞, ի՞նչ կայ որ, գո՞րծ էր ուզում տալ, նա շուտով առվան կըգայ. եթէ կամնաք, նա կարող է ձեզ համար ջուր բերել...

— Ոչ, դեռ պէտք չէ, դուք նորա կի՞նն էք:

— Կինն եմ, հապա ի՞նչ, կինը չեմ ի՞նչ եմ. ի՞նչպէս թէ կինը չեմ, զայրացած պատասխանեց նա:

— Դէ՞ք, ես էլ այդ եմ ասում, թէ նորա կինն է՞ք. ասացէք ինդրեմ, դուք կարծեմ անուոր ունէք:

— Ցնուո՞ր:

Եւ նա նոր զարմանքով և մինչև անգամ կասկածելով

գլուխը վեր բաշեց, անշուշտ նրան տարօրինակ թուաց, որ այդ պարոնը գիտէ ամեն բան:

— Այո, ձեր տնուորը, ուսանողը, աւելացրեց Սմուռովը:

— Հը՛, կարելի է և ուսանող է, ի՞նչ իմանամ:

— Բայց ես գիտեմ, որ նա ուսանող է:

— Իսկ մնք, պարոն, չենք կարող այդ իմանալ — ասաց կինը մի աեսակ համոզիչ ձևով:

Կարելի է ռուսանող խօսքից կինը գաղափար էր կազմում մի որևէ վատ, անվայել բանի մասին և այդ պատճառով պաշտպանում էր:

— Մենք այդ գիտենալ չենք կարող. մնք աղքատ մարդիկ ենք. մեր քրանքի աշխատանքով հաղիւ ազրող:

— Ես տեսնում եմ, որ դուք աղքատ էք, բայց նա ձեզ երկու շատ բիշ է վճարում:

— Վարո՞ւմ. ամփոք 50 կոպէկ էր խոստացել, այն էլ չսեսանք. և ո՞րտեղից նա տայ. երեք օրով անօթի, ծարաւ է մարդը. շատ անգամ խղճում ենք և տալիս մեր բաժին հացից...

«Մ՛հ, Աստուած իմ՝ դողդողալով մտածում էր Սմուռովը. «այս ի՞նչ բան է»:

— Մենք նորան պահեցինք մեզ մօտ, պառաւը շարունակեց և ինչու չպահէինք, քանի որ մարդը ենդրում էր ... մեր վերնոյարկը դատարկ էր, տուինք նորան, բայց նորանից դեռ ոչ մի կոպէկ չենք ստացել, պարոն:

— Ո՞րտեղ է այդ վերնոյարկը:

— Զեզ հարկաւո՞ր է:

— Այո, ես նորա ընկերն եմ և ուզում եմ տեսնել:

— Ե՛, ի՞նձ ի՞նչ, նայեցէք, թէ ուզում էք. միայն թէ ի՞նչ կայ տեսնելու. այնտեղ բան էլ չկայ... մարդս նորա համար փայտի կառներից մի մահճակալ շինեց, այդ է, յետոյ նորա ճանապարհի հին պայուսակն է, և 10—20 կտոր էլ գիրք, այս է բոլոր ունեցած. չունեցածը, նա շատ խեղճ պարոն է. այնախի աղքատ, որ ոչ մի տեղ այդ տեսակ բան չես տեսնի... մնք աղքատ ենք, բայց նա մեզանից շատ աւելի ողորմելի դրութեան մէջ է. համեցէք, տեսէք թէ կամնաքը.

Եւ նա լուսցը թողեց տաշտի մէջ, ձեռքերը սրբեց գոգնոցով և Սմուրովին ներս տարաւ։ Դրսից ուղղակի ճանապարհ կար դեպի պատիկ, մառանի պէս սենեակը, ուր այնքան մութն էր, որ պէտք եղաւ լուցկի վառել ներսը դիտելու համար։

Այս՝ այնտեղ իսկ այնպէս էր, ինչպէս որ նկարագրեց ջրկիրի կինը։ — տախտակներից իրար կպցրած մի մահճակալ, կալտուխինի պատուած պայուսակը և դրբեր։ Սմուրովը նայեց, գլուխը շարժեց և տիսուր-տրտում դուրս եկաւ սենեակից։ Նա մաս բարև ասաց պառաւին, խոսացաւ էլի գալ, երբ նորա անուորը կը վերադառնայ և փողոց դուրս գալով շտապեց նստել առաջին հանդիպած կառքի մէջ։

“Նա շտապում էր շուտ վերադառնալ, վախենալով, թէ չէինի” կալտուխինը համալսարանից դուրս եկած լինի։ Բայց Սմուրովը հասաւ վերջին դասահօսութեան և կանգնեց համալսարանի դրանը, սպասելով կալտուխինին։

Ուսանողները վերջապէս դուրս եկան, նոցա մէջ էր և կալտուխինը։ Սմուրովը նորան մօտեցաւ, հետը խօսեց և դիտմամբ յետ մաց, որ թողնի ընկերներին առաջ անցնելու։

— Լսի՞ր, կալտուխին, ես քեզ մի ինդիրք ունեմ — ասաց նա։

— Ի՞նչ, ցրուած կերպով հարցըց կալտուխինը։

— Գնանք ինձ մօտ մի րոպէ։

— Ինչո՞ւ։

— Այնպէս... ես գործ ունեմ... Գիտես — և Սմուրովը սկսեց մի բան հնարել։ — դիտես, ես գերմաներէնից մի կտոր բան եմ թարգմանել... և մի աեղ դժուարութեան եմ հանդիպել... դու ինձանից լաւ դիտես գերմաներէն, պյտպատճառով ուզում եմ, որ ինձ օգնես...»

— Ես յոգնած եմ, ասաց կալտուխինը։

— Աւելի լաւ, ինձ մօտ կը հանգստանաս։

— Բայց... ես պէտք է պարապեմ...»

— Ի՞նչով։

— Աշակերտիս հետ... նա ինձ կըսպասէ։

— Մեծ բան է, թէ նա մի քիչ ել սպասէ, վնաս

չունի. դու առանց պն էլ դասերդ քի՞չ ես բաց թողնում։
Եւ Սմուրովը նորա թեն ընկաւ ու ամուր բռնեց, վա-
խենալով, թէ չլինի՝ ընկերը փախչի։

Կալտուխինը տատանւում էր. չգիտես թէ ինչու հա-
մար նա դժուարանում էր կատարել ընկերոջ խնդիրը։
Բայց խօսելով, նորա աննկատելի կերպով հասան մինչև
Սմուրովի բնակարանը։

— Դէ՛, տեսար, արդէն հասանք, — ասաց Սմուրովը —
մտի՛ր մի բոպէ... ինդրում եմ։

— Բայց ժամանակ չունեմ, ասում եմ քեզ... մէկ
անգամ էլ փորձեց աղատուել Կալտուխինը։

— Զարմանք է, միթէ ընկերիդ համար չե՞ս կարող մի
10 րոպէ զոհել։

— Դէ՛, լաւ...

Կալտուխինը անյարմար զգաց այդքան մերժել։ Սմու-
րովը յիրաւի նորան միշտ անկեղծ ու լաւ ընկեր էր երեսում։

Նորա բարձրացան չորրորդ յարկը։ Սմուրովը մի փոք-
րիկ սենեակ ունէր մահմակարով, սեղանով և բազմոցով.
ամէն բան այդ սենեակում մաքուր ու կարգին էր։ Սմու-
րովը թէև դասերից քիչ փող էր ստանում, բայց ընդու-
նակութիւն ունէր լաւ սարգուելու և տեղաւորուելու։ նա
մաքրութիւն, կարգ ու կանոն սիրող էր և միշտ էլ ինքն-
էր կարգի բերում իւր սենեակը։

— Նստի՛ր, ասաց նա Կալտուխինին, ցոյց տալով բազ-
մոցը. իսկ ես կը փնտուեմ իմ թարգմանութիւնը. թէև, ա-
ւելացրեց նա — 10 րոպէի չափ կը բրբռեմ թղթերս, իսկ
մինչև այն ժամանակ դու պառկի՛ր հանգստացի՛ր. ահա-
քեզ բարձ։

Եւ մահմակալի վերայից բարձն առաւ ու դրեց բազ-
մոցին։

— Ա՞խ, իրաւ, շարունակեց Սմուրովը — մի կտոր-
երիշկ և հաց կայ... եկ նախաճաշենք..., երեկի դեռ ճա-
շած չես լինի. չէ՞ որ նախաճաշեկը չէ խանգարի. ընդհա-
կառակը, մինչև անգամ ախորժակ կը զրդուե...»

Կալտուխինը նայեց բազմոցի և բարձի վերայ, յետոյ-
իւր հայեացը դցեց երիշկին, որ Սմուրովն արդէն դրել
էր սեղանի վերայ և յանկարծ, նորա երեսը ծամածուեց։

— 2է՛. գիտես, ժամանակ չունեմ, սառը կերպով աւսաց նա.— Ես կերթամ և միանդամից շուռ եկաւ դեպի դուռը:

— Սպասի՛ր մի բոպէ... նստիր ինդրեմ:

Եւ Սմուրովը նորա թեկից բաշեց ու ամուր բռնեց:

— Թող ինձ, խուլ ձայնով ասաց Կալտուխինը. — ասում եմ, որ ժամանակ չունիմ... հիւրերին ընդունելու այդ ի՞նչ տարօրինակ ձև է...»

Սմուրովը համարեա զօռով նորան նստեցրեց բազմոցի վերայ և այդ ժամանակ միայն նկատեց, որ Կալտուխինը դժուարութեամբ էր շունչ բաշում:

— Լսի՛ր, Կալտուխին, դու ինձ ներիր... բայց չե որ դու... դու սասահիկ բաղցած ես... դու բաղցածութեանից հալ ու մաշ ես եղել... կեր ասում եմ:

— Ե՞ս, դիւական ծիծաղով ասաց Կալտուխինը. այդ ո՞րաեղից հսարեցիր, չեմ հասկանում...»

— Այո՛, այո՛, դու բաղցած ես... Էլ ծածկել հարկաւոր չե... աղաչում եմ, Կալտուխին, շուտով մի բան կեր, ոյժերդ նորոգիր, ախոր դու 8—4 օրով բան չես ունենում ուտելու...»

Կալտուխինը զարմանքով, համարեա վախով նայեց նորա վերայ իւր փայլուն ու բորբոքուած աչքերով, իսկ Սմուրովը շարունակեց՝

— Դու ապրում ես գետնայարկում, համարեա իբրև ողորմութիւն բեղ պահում են... դու մի փոքրիկ կտոր հացով ես կերակրում, որը խղճալուց տալիս է ջրկրի կինը... Ես այդ բոլորը գիտեմ, Կալտուխին, ես այնաեղ էիր... Ես այնտեղ պատահմամբ... հասկանում ե՞ս, պատահմամբ ընկայ...»

— Բայց դու ի՞նչ իրաւունք ունեիր այդ անելու, հարցրեց Կալտուխինը յանքերը վրայ բերելով:

— Իրաւո՞ւնք, մ՞թէ այսանեղ իրաւունք է պէտք, բաւական է, որ ընկեր եմ... Եւ ես քեզ լւաւեմ հասկանում, Կալտուխին — դու չափազանց ինքնասէր ես և այդ ինքնափրութիւնդ վիրաւորում էր ամեն բայլափոխում...»

— Այո՛, այո՛, այո՛... ամեն քայլափոխում. ինչպէս արծագանք կրկնեց Կալտուխինը և աւելացրեց խիստ արտա-

յայտիչ կերպով — այս. ամեն մէկ հայեացքով, ամեն մէկ շարժումով վիրաւորում էին իմ ինքնասիրութիւնը... և չէի կարող, հասկանում ե՞ս, չէի կարող տանել այդ ամենը: Եւ նա գլուխը ցած գցեց ու շարունակեց:

— ԱՇ, թէ ինչու համար ես Հնարեցի այն դասը... և ես կը համբերեմ, Սմուրով, կը համբերեմ... դու ոչ ոքի շասես, 'ի սէր Աստուծոյ, շասես, լսում ես... Աւելի հեշտ է ինձ համար տանել ջրկրի և նորա կնոջ անարգանքը, քան թէ ընկերներիս արհամարհանքը...

— Սպասիր, մեղմութեամբ լաեցրեց նորան Սմուրովը. դորա մասին յետոյ... իսկ հիմայ կեր, այդ գլխաւորն է... մի' ամաչիր, մենք ընկեր ենք. մենք դեռ երեխայութիւնից միմեանց ճանաչում ենք. ինձանից քաշուել պէտք չէ. ա՛յ, ես իսկոյն կը պատուիրեմ թէյ պատրաստեն, դէ՛, արի միասին ուստենք... իսկ յետոյ... ես քեզ կասեմ, որ 'ի նկատի ունեմ մի դասի տեղ, որ ինձ են առաջարկում, բայց ես քեզ կը տամ. գիտես որ ինձ բաւական է իմ ունեցածը... ուրեմն սկսենք...

Սմուրովը լաւ օրինակ տուեց և առաջ ինքն սկսեց ուսել. իսկ Կալառուիինը մի տեսակ հիւանդու, լարուած դէմբով, կարծես մեծ ոյժ գործ գնելով, վերջապէս վճռեց ձեւը մօտեցնել հացին: Յետոյ նորա թէյ Խմեցին, Կալառուիինը բիշ բիշ աշխոյժի եկաւ, կենդանացաւ կարծես և սկսեց պատմել իւր կեանքը ջրկրի բնակարանում:

Այդ յիրաւի զարհուրելի՛ բան էր. այդ տեսակ կամաւոր զրկանքներ կարող է տանել միայն կամքի մեծ ոյժ ունեցող մարդը:

— Եւ գիտե՛ս, ասում էր նա Սմուրովին — ես վճռել էի այդպէս բաշ տալ մինչև աւարտելս, այդ ի հարկէ, շատ դժուար էր, շատ... երբեմն ինձ թւում էր թէ՝ բաղեց գետան կը գլորուիմ... բայց այդպիսի վայրկեաններում այս գիտակցութիւնն էր առաջ գալիս՝ թէ ես ոչ ոքից կախում չունիմ, ոչ ոքի ոչ մի բանի մասին չեմ. ինդրում և թէ իմ ընկերներն այլ ևս իրաւունք չունին վիրաւորական, արհամարհական հայեացքով նայել ինձ վերայ, և ահա այդ գիտակցութիւնն ինձ ոյժ էր տալիս... Իսկ այժմ դու ասում ես, որ դաս կայ ինձ համար. շատ շնորհակալ եմ. ես այդ

կընդունեմ սիրով. Էլ պատճառ չեմ գտնում ինձ աննպատճէ տանջելու, մանաւանդ որ չեմ կասկածում քո անկեղծութեան վերայ... բայց եթէ բան է, ես դարձեալ ձախորդութեան մէջ ընկնելու լինիմ. ոչնչից չեմ վախենում, ոչ կարիքից, ոչ զրկանքից. ես էլ ընդունակ չեմ որ և է մէկից բան խնդրելու և պարտաւորուելու... Կերթամ նորից իմ շրկրի մօտ, իմ մութը որը և կըկերակրուեմ միայն պստիկ կտոր սև հացով. դեռ էլի նոցանից պարտաւորուել ես կըկարողանամ, բայց ընկերներիցս երբէք, երբէք...

Կալտուխինի հանգամանքները լաւացան. նա վերջապէս դաս ունեցաւ ձեռնուու պայմաններով և մինչև աւարտելն էլ նեղ դրութեան մէջ չընկաւ:

Սմուրովն երկար ժամանակ այդ դէպքը գաղանիք էր պաշում և միայն երբ երկուսն էլ աւարտեցին իրանց ուսումը, մէկ անգամ ընկերական շրջանում պատմեց:

Եւ շատերը յիշեցին, թէ ինչպէս անզգուշ կերպով, թէև անգիտակցաբար, իրանց անաեղի կատակներով ու հայեացըներով վիրաւորում էին կալտուխինին այն ժամանակ, երբ նրան կարիքն ստիպում էր օգնութիւն խնդրել ընկերներից. յիշում և կարմրում էին:

Թարգ. Ճի՛ՌՈՒՀԻ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

